# ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ

ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի փետրվարի 20-ի գիտական նստաշրջանը նվիրված էր Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին։

Նստաշրջանում ներածական խոսքով հանդես եկավ կուսակցության հնագույն անդամ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանը։

«Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի պատմական բախտը» թեմայով զեկուցեց պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ա. Գալոյանը։

Լենինի անունը,— ասաց նա,— թանկ է սոցիալական և ազգային ազատություն ձեռք բերած բոլոր ժողովուրդների համար։ Ազատության պայքարի ելած մեր ժողովրդի խորհրդանիշն է եղել Լենինը, բայց Լենինը մեր անցյալը չէ միայն, նա մեր ներկայի մարմնացումը չէ միայն, Լենինը մեր ժողովրդի հարատևության խորհրդանիշն է, Լենինի գաղափարներին հավատարիմ մնալը այդ հարատևության գրավականն է։

Խոսելով հայ ժողովրդի պատմության 1918—1921 թթ. դեպքերի մասին, զեկուցողը մատնանշեց, որ թեմալական կառավարության քաղաքականությունը ոչնչով չէր տարբերվում նախորդ կառավարությունների հայտնալած քաղաքականություններից, որ դա փաստորեն հայ ժողովրդի գենոցիդի շարունակությունն էր, իսկ դաշնակցական կառավարությունը, հարազատ մնալով իր որդեգրած սկզբունքներին, հայ ժողովրդին արդեն հասցրել էր կործանման եզրին։ Բախտորոշ այդ պահին միայն Սովետական Ռուսաստանի կառավարությունն էր, որ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, հայ ժողովրդի իմպերիալիստական ճնշման քաղաքականությանը հակադրեց նրա լիակատար ազատագրության քաղաքականությունը և երբեք չդավաճանեց իր հռչակած սկզբունքներին։

Զեկուցողը հատկապես հանգամանորեն անդրադարձավ Վ. Ի. Լենինի ստորագրությամբ հրապարակված ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի և ժողովրդական կոմիսարների սովետի այն որոշումներին, որոնք վերափոխել են նորաստեղծ Սովետական Հայաստանը։

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մ. Հակոբյանի զեկուցումը նվիրված էր Հայաստանում սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի կենսագործմանը։

Պրոֆ. Ա. Հակոբյանը Հայաստանում սոցիալիզմի կառուցման հարցը կապում է Սովետական Միությունում սոցիալիզմի կառուցման ընդհանուր խնդրի հետ։

Ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և կուլտուրական հեղափոխության շնորհիվ,— նշում է պրոֆ. Ա. Հակոբյանը,— Սովետական Հայաստանը դարձավ սոցիալիստական զարգացած արդյունաբերության, առաջավոր գյուղատնտեսության և կուլտուրայի երկիր։

Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունները պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Հ. Բարսեղյանը պարբերացրեց երկու ժամանակահատվածի՝ նախահեղափոխական և հետհեղափոխական։ Նրա զեկուցումը նվիրված էր Վ. Ի. Լենինի թողած գրական հարուստ ժառանգությանը։ Պրոֆ. Բարսեղյանը անդրադառնալով բոլշևիկյան մամուլի կատարած մեծ դերին՝ Լենինի աշխատությունները հայերեն հրատարակելու գործում, ցույց տվեց, որ առաջնորդի առաջին հոդվածները հայերեն տպագրվել են դեռևս 1903 թ. «Պրոլետարիատի կռիվ» թերթում։

Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելուց հետո նոր թափ ստացավ Լենինի աշխատությունները հայերեն հրատարակելու գործը։ Զեկուցողը առանձնապես բարձր գնահատեց 1920 թ. Վ. Տերյանի թարգմանությամբ, Ա. Մյասնիկյանի և Պ. Մակինցյանի խմբագրությամբ լույս տեսած Վ. Ի. Լենինի «Պետություն և հեղափոխություն» աշխատությունը, 1930 թ. Ա. Խանջյանի խմբագրությամբ հրատարակված երկերի ժողովածուի 1-ին հատորը, որով հիմք դրվեց առաջնորդի աշխատությունների բազմահատոր հրատարակությանը։ Ապա պրոֆ. Խ. Բարսեղյանն անդրադարձավ սփյուռքահայ առաջադեմ ուժերի՝ Վ. Ի. Լենինի աշխատությունների նկատմամբ ունեցած մեծ հետաքրքրություններին։ Նա նշեց, որ դեռևս 1922 թ. ԱՄՆ-ում հրատարակվեց «Պետություն և հեղա-

փոխությունը աշխատությունը, որը 1920 թ. Վ. Տերյանի թարգմանությամբ արտասահմանյան հրատարակությունն էր։ Խոսելով այն մեծ ու հարուստ փորձի մասին, որ ամփոփված է Հայաստանում Լենինի աշխատությունների հրատարակման գործում, զեկուցողը նշեց, որ այժմ մեծ հնարավորություններ կան առաջնորդի երկերի լիակատար ժողովածուի հայերեն հրատարակության համար և այն իրականացվելու է առաջիկայում։

ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

* * *

Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին էր նվիրված ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում կայացած գիտական նստաշրջանը։

Ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Նահապետյանի բացման խոսքից հետո «Լենինը և գրականության մեթոդոլոգիայի մի քանի հարցեր» թեմայով զեկուցեց բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Սարինյանը։

— Վ. Ի. Լենինը,— ասաց զեկուցողը,— ոչ միայն քաղաքական-հեղափոխական գործիչ էր, որը մշակեց մարդկության պատմության երբևէ հայտնի ամենամեծ սոցիալական հեղաշրջման ուսմունքն ու տակտիկան, այլև հանճարեղ մտածող-գիտնական, որն իր անփոխարինելի ավանդն է ներդրել համաշխարհային տեսական մտքի ասպարեզում։ Լենինյան ուսմունքը ոչ միայն գիտության այս կամ այն ճյուղին վերաբերող կանխատեսությունների հանրագումար է, այլև մեթոդոլոգիական այն ուղեցույցը, որ տալիս է նա սոցիոլոգիան գիտության բոլոր բնագավառներում։ Այս իմաստով այդ ուսմունքը անգնահատելի նշանակություն է ձեռք բերում նաև գրականության պատմության հարցերի պատմական լուսաբանության, գրականագիտության մեթոդոլոգիայի տեսակետից։

Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Աղաբաբյանը զեկուցեց «Վ. Ի. Լենինը և սովետական գրականության զարգացման հարցերը» թեմայով։

Նա նշեց, որ Լենինը առանձնահատուկ խնամքով և հետևողականությամբ էր անդրադառնում սոցիալիստական հասարակարգի գրականության ու արվեստի բնույթի և նպատակի հարցերին։ Սոցիալիստական գրականության վերաբերյալ հայացքների մի ամբողջական, կուռ և բազմակողմանի համակարգ է նրա «Կուսակցական կազմակերպություն և կուսակցական գրականություն» հանրահայտ հոդվածը, որտեղ արված է «մինչև վերջ հեղափոխական դասակարգի շարժման հետ» կապված արվեստի սպառիչ բնութագիրը։ Ս. Աղաբաբյանն անդրադարձավ նաև լենինյան մյուս հոդվածներին։

Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Դարոնյանը իր զեկուցման մեջ նշեց, որ Լենինը վաթսունականների նկատմամբ հետաքրքրություն է հանդես բերել դեռևս իր հրապարակախոսական և հասարակական գործունեության վաղ շրջանում։ Հետագա տարիներին Վ. Ի. Լենինը ակտիվորեն հանդես է եկել հեղափոխական-դեմոկրատներ Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի և այլոց ժառանգության պաշտպանությամբ։

Զեկուցման երկրորդ մասը նվիրված էր հայ մարքսիստների, մասնավորապես Ստ. Շահումյանի և Ալ. Մյասնիկյանի՝ վաթսունականների գործունեությանը տրված գնահատություններին։

Բանասիրական գիտությունների թեկնածու Զ. Ղուկասյանը հանդես եկավ «Մ. Գորկու լենինյան գնահատության արձագանքները հայ գրականագիտության մեջ» զեկուցմամբ։ Նա ասաց, որ Լենինը՝ Գորկու՝ որպես գրողի և հասարակական գործչի քայլերին ու ճակատագրին հետևել է նրա գրական ասպարեզ իջնելու առաջին տարիներից։ Այդ ժամանակ էլ Լենինը նկատել էր Գորկու անխզելի կապը Ռուսաստանի հեղափոխական շարժման հետ։ Նա շարունակ խրախուսում էր Գորկու գրական գործունեությունը, պաշտպանում բուրժուական գրականագետների և հրապարակագիրների հարձակումներից։ Գորկու պաշտպանությամբ հանդես եկան նաև առաջադեմ հայ գործիչներն ու հեղափոխական գրականագետները, որոնց թվում Ստ. Շահումյանը, Ալ. Վերմիշևը, Վ. Կասպարյանցը։ Նրանք բարձր գնահատեցին պրոլետարական մեծ գրողի ստեղծագործությունը և ցույց տվեցին Գորկու՝ որպես գեղագետի և հասարակական գործչի վիթխարի դերը բանվոր դասակարգի պայքարում։

«Վ. Ի. Լենինի կերպարը հայ գրականության մեջ» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Մանուկյանը։ Զեկուցողը հատկապես նշեց, որ համաշխարհային գրական-գեղարվեստական լենինապատումի այդ մեծ հարստության մեջ թե՛ սկզբնավորման վաղեմիությամբ, թե՛ ճոխությամբ ու բազմազանությամբ և թե՛ գաղափարական-գեղարվեստական բարձր մակարդակով առաջին տեղերից մեկը գրավում է հայկական լենինապատումը։

ԳՐ. ԳՅՈՒՄՋՅԱՆ